դանդն ուներ, հիրան հաշիվները: Մանգիթին կար
մե խատ քուր: Մանգիթի խերը ուզում էր, էտ հի-
րան ախճկան անք Զամրախին ու դաոներն բնդա:

տանկը: Մահաթն էլ կհինկր թաքավորի աներծա-
րը, րուսն էլ դաթի թարույի էր թաքույի Հիրիդ-
վա էտ րաները ուր տեսավ Գողդի տանը, Մա-
դաթի սաղ տղաները ուսկն ու վրա արավ, չէր
դիզում թե ի՞նչ անի, դի՞ր էթա: Թե լավն էն ա,
որ էթա համեն խորը մեկ-մեկ պադմա, թո խերն
էլ հիմանա:

Ըստ խամար էլ Զամբախն ու Մադաթը Գո-
ղդի կշտից ուր դուռ էկան, էն հիրանց բաժվելու
ժամանակ րսկի հիրար գիշեր բարի էլ չմախթե-
ցին, սուս ու փուս համեն մեկը գնաց հիրան սեյ-
նակը:

Զամբախն խասնում ա հիրան օթախը թե չէ,
ստանց շորերը խանելու, ստանց ողնմները խա-
նելու, առանց խաց ուտելու, պատկում ա կառու-
յաթի վրեն, հնգնում քիթ ու բերնի ու մտա-
ծում ա:

Հոռավտուն պալատի կ'անանանքները հնում-
մղնում են, Զամբախին չեն պատաշում, էթում են
թաքավորին տուում են.— Թաքավորն արած մնա,
հեսոր Զամբախ մեղ հաշկով չհնգե, էս դի՞ր ու
դացեր ա: Գողդի կուշտն էլ չէ, Գողդին հենա,
հիրան դիքնի մեղ առտուր ա անում, խաբրինը
ասավ. «Հիրիզուն, Մադաթի խետ իմ սեյնակումն
ին, ընդուց էս յանը էլ չեմ տեսե»:

Ըստնք թո ըտե Զամբախին ման դտն, մենք
խարարը տանք Մադաթից:

Մադաթը գալում ա տուն, տենում ա, ուր հըլը
հիրան խերը չքեն, մնացած տենցիք սաղ քնուկ
են: Ձեռաց մղնում ա ջ'նչ վանդիրի, աշխնքս հի-
րան խոր կուշտը ու հմեն հիրան տեսուկներն ու
լսուկները մեկ-մեկ, տեղին-տեղին պադմում ա
խորը, վրեն էլ հավլցնում տ, որ Ձամբախը Գո-
ղդի քվիը պատկերը ուր տեսավ, նախալը ուշկը
դնաց, նոր անջաղ-անջաղ ուշկի բերինք:

Ջ'նչ վանդիրը էտի ուր լաց, հնգավ մտքի տակ:
Դուղն ա, Մադաթը բան աշան չաբավ, համա հի-
րան նիաթից, ունդ-ուղնդից էրեում էր, ուր շատ
դիլխոր հնգավ: Սկսեց մտածել, թե իմա՞ն անի,
որ Զամբախին դոռով ա, խաթըով ա, թե համո-
պելով ա, կղրա Գողդից էլ, Գողդի քվորից էլ:

Ջ'նչ վանդիրն էլ թո մտածա, ճար գթնի, թե
ինչպեստ անա, ուր հիրտն նպատակին խասնի.
մենք դառնանք թաքավորի ու մեկ էլ Զամբախի
վրեն:

Թաքավորը, թաքույին, սաղ կ'անանանքները
հնդուկ սաղ պալատը տակն ու վրա են անում, հա-
մա Զամբախին չեն գթնում: Կեսորվա յանը կ'ա-
րավանքներից մեկը պատաշումը բացում ա Զամ-
բախի օթախի դուռը, ներս ա մտնում, թաշմում,
անում ա, ուր հենա թաքավորի տղեն, առանց շո-
րերը խանելու, առանց ողնմները խանելու, հըն-

դուկ ա քիթը-բերնի վրեն, քնուկ ա, քնի մեղն էլ
խոսում ա: Կ'անանանք յավաղ դուռը ծասկում ա,
վազնում թաքավորին հաշկալուսանք ա տալում.
«Հենա քո տղեն հիրան սեյնակում քնուկ ա»:

Նոր ըտե թաքավորը գեժանգեժ գլխի յա
հնգնում, ուր ախար Զամբախի սեյնակը լավ չեն
հիշկացե, էնենց դուռը բացեր են, վտաղով մե
խատ ճիկ են տվե, թողե գացեր են, համա Զամ-
բախն ընդե քնուկ ա հելե: Մե նմուռում, սաղ
պալատում տարածվում ա, ուր Զամբախը գթնվել
ա: Վաղիրն էլ ուր լսում ա Զամբախի կորելու և
դտնվելու մասին, նոր ըտե էտի հիրան մատը կծում
ա ու խասկնում ա, որ բանի մեղը բտն կա, համա
մարթի բան չասում:

Թաքավորը, թաքույին, վանդիրներն ու նա-
դիրները, մախլաս, ուր ուր էտտեղ կեր, վազնում
են Զամբախի սեյնակի յանը, թաքավորն, թա-
քույին ու մեկ էլ ջ'նչ վանդիրը, դուռուկներով մղ-
նում են ներս, կայնում են դոռների հատեղը, մեկ
էլ տենում են՝ Զամբախը քնի մեղ ըսկսեց խո-
սուլ, ասում է. «Գողդի ջտն, տուր մե րան էլ հիշ-
կեմ էա պատկերքին, ի՞նչ կհնի, յա էլ ախշըքի
տակը կա յա՝ Սաթոն ա, չկա յա՝ Սաթոն ա. ես
էլ բան չեմ ուղում»:

Ըտե ջ'նչ վանդիրը թաղադրուն հիրան մատը
կծեց, դառցավ թաքավորին սասավ.— Քո տղեն
ծանդր խիվանդ ա, հեթիմ կանչա, դոխտուր կան-
չա, թո դան լավցնեն:

Թաքույին մոտկցավ Զամբախին մե թեթե
ժխշեց, գաթնցրեց, խարցրեց.— Քա տղա ջան,
բեղի էտ ի՞նչ ա պատաշել, հնչ ե՞ս չուր հիմի
չեբի մեղը, ի՞նչ իր խոսում քե ու քե: Խիվա՞նդ
ես, ի՞նչ ես, ասա հիմանանք, ցավիտ ճար տ-
ենեք:

Զամբախն հաշկերը տրորեց, օրկշտաց, ծը-
մըրկտաց, հիշկեց չորս բոլորը, տեսավ հիբան
օթախը լիքը մարթ ա լավուկ, գլխը կախեց, ամ-
չընալով սասավ.— Այ մեղ, իմ դանդեղը կտպուտ
ա, ինձի մի խաբցրա, չուր տենանք իմալ կհնի:

Զամբախն էլ բան չասավ: Թաքույին իշքան
ուղեց բան խարցնել, մեկ ա՝ տղեն էլ ո՞նչ մե
հարցին էլ սլադասխան չտվեց, հա ախ ու վախ
էր քաշում:

Հնցավ մէ առժամանակ: Զամբախն համարյա
էլ ո՞նչ ուտում էր, ո՞նչ խմում, սաղ օրը տխուր,
տրտում ման էր գալում խառ բախչեն: Մադաթ-
ի խետ քիշ-քիշ էր պատաշում, համա վտխտի-
րեախտի էթում էր Գողդի դիքնից, յա էլ չէ՝ հի-
բիզունները էթում էր Գողդի սեյնակը, ընդե նոր
տղի բեյնը բացվում էր, չումքի ուր դալում էր Գո-
ղդի կուշտը, ինչի մասին էլ, ուր խոսում ին,
Զամբախը խոսքը ֆոռցնում, բերում կայնցնում

էր Սաթոյի գլխին, թռչն-նորուց խնթրվում էր Գողտլին, որ էնի մե դան էլ Սաթոյի նկարը նըշանց տտ հիրտնը, շումքի Սաթոյի խամար հինքը խելքամազ էր հլնում:

Թաքավորն ու թաքուլին էլ մե յանից ին զոռ անում, ասում ին. «Մե րե տենտնք էտ ախճկա պատկերքը, որ դու ըառու խամար էտքան դեմ ու դտրց ես հլնում ու դառնալարամ ես հելե»:

Համա Գողտլը, որ մե դան ասեր էր չէ, էլ նկարը ծոցից չէր խանում ու հիրան խոսքը յեա առնում, հա ասում էր.—Մարթ հիրան թքածը յետ չի լիզա, տսեր եմ՝ չէ, պրծալ. եփ վախալը դա, րարին էլ խեար, ես կէթամ իմ երդիրը, քեզ էլ խետս կաանեմ, նոր էն ժամանակ հմմեն ինչ լավ կհլնի:

Հնցավ էանց մե շափաթ, էրկու շափաթ, իրեք շափաթ, մախլան, մե դան հիրիդունը Գողտլը չորերը խանեց, որ էթա թաքավորական րազնիսը լոխկնա, զաթի Գողտլը հմմեն վախա էլ թաքավորի բազնսումն էր լոխկնում: Եփ էթում էր լոխկնալու Սաթոյի նկարը պախում էր էնենց տեզ, որ մարթ չգթնի, էս դան իմալ պաակերքը խաներ էր, հիշկեր էր, որ հիրան կարոտն առնեք քվորից, մոռցեր թողեր էր սառլի վրեն ու դացեր էր րազնիս:

Գողտլի էթան ու ընդու հեզկից Զամբախի սեյնտկ մղնելը մեկ ա հլնում: Զամբախը որ մղնում տ օթախը, անում ա սառլի վրեն Սաթոյի նկարը, շաղալեքն էլ զանե հառքին ու պատերին: Զամբախի հաշկերը թոնում են քյալլեն, պատկերը թոցնում ա ու վազնում հիրան ծնողների կուշար:

Թաքավորն ու թաքուլին որ տենում են Սաթոյի նկարը, շատ են խավնում, խելքամազ հըլնում: Լավ թտմաշ են անում, հավեսները խանում, յեառ Զամբախին ասում են. ատր դիր հիրան տեդր, որ Գողտլը չհիմանա: Համա շուր Զամբախը գալում ա, էա նմուսին Գողտլն էլ ա գալում և հմեն ինչ րացվում ա:

Գողտլն ասում ա.—Ես իմ կողմից իմ քվորը տվի քեզի, մնում ա, որ քո խերն ու մերն ուզեն, մեկ էլ Սաթոն հինքը քեզի ուզա:

Գողտլի մեկ էլ Զամբախի էս խոսակցութենը մե օրվա մեջ տարածվում ա սազ պալառով մեկ: Հմմեն ուրխնում են, սկսում են պաղրաստութեն տենալ, որ դտրունը պտի էթան խուր: Խայոց անից խարս րերեն Զամբախի խամար:

Թաքավորը, թաքուլին, սադ պալառականները թո ուրխնան, մենք խարարը ասնք ջ'ոչ վազիրից և հիրան հնդանիքից:

Ջ'ոչ վազիրը, որ հաստաա հիմանում ա, որ Զամբախը իմալ ձ'թով կպցրուկ հլնի Սաթոյին,

հիրան պլանները, որ ուզում էր հիրան ախճկան տար Զամբախին, հեջ հելավ, սկսում ա սթից բաներ մոզոնել, փիս-փիս խոսակցութեններ տարածել Սաթոյի մասին: «Գիվա Խայոց անից մարթ ա էկե, պաղմում ա, որ էտ Սաթոյի օրը մեկ ա հլնում, ծոցի տղամարթիք տասնումեկ, որ էնի սկի հիրան ախպորը չի էլ ուզում ճանչնա, Ջ'ոչ վազիրը, հիրա տղա Մանգաթը, մե խոսկով, հմնով հլնում են մեկ, ինչ ա Սաթոյին հաշկից քցեն, որ Գողտլն էլ խայառակ հլնի, թողա էտ երդիրը դնա, որ Զամբախը հիբանց ախճկան ուզա:

Բամբասանքները գալում են, հնդնում են թաքավորի և հիրան հնդանիքի հանգուճը: Սվաան չի հավառում, յեառ որ քանի դնում ա, էնքան սթերը շտտնում ա, թաքավորն սկսում ա հավատալ: Մե օր էլ թաքավորը Զամբախին կտնշում ա հիրան կուշան, ասում ա.—Սյ որթի, ախար քո խավնած ախճկա մասին շատ լավ ու վաա են ասում, ըառ ձենը գալում մեր հանգաճն էլ տ հնդնում. էա ի'նչ խարար ա, հըլը մե Գողտլին կանչա թո զա, մե խաա խարց ու փորց անենք, տենանք դուզն են ասում, թէ րստե մե հուրիշ բան կա: Թե էա խոսկ ու զըիցը դուզն հելավ, տյ րալում, ձեռ պաի քաշես էա լաշառից, ջ'ոչ վազիրի ախճիկն ուզենք, նամուռով, տրուռով, մեր հառելը ջ'ոչրցուկ ախճիկ ա, լավ հնդանիքից:

Համա Զամբախը դլխի էր, թե բանն ինչի մեջ ա և վիր սարքած րաներն են: Կայնում, խորն ասում ա.—Սաթոն ինչ ախճիկ էլ ուզում ա հլնի, ես տերն եմ, համ էլ քեզի ասեմ, այ խեր, էա հմմեն ֆրթոնեքը ջ'ոչ վազիրի ստրքուկ րաներն ա, էտենց սութ լուրեր ա ասարածում, որ մենք իսկականից Սաթոյից ձեռ քաշենք, համա ջ'ոչ վազիրը հիրան դերդաստանով որ պաղտի, ճտքի էլ, ես ընդու ախճկան չեմ առնի: Ոյիդ կմնամ, կզրկվեմ, թաքավորությունից, ախշար չեմ հնդնի, թաքիլան ջ'ոչ վազիրի ախճկան շառնեմ, իմը՝ կա Սաթոն ա: Գողտլին հեքուց հիրդուն կկանչեմ քո կուշար, դու խեար խոսա, համա հուրիշ մարթ թո չհլնի:

Մեկել օրը, հիրդունը Զամբախն էթում ա Գողտլի կուշար, ընդեզից էրկսով գտում են առն ու դուզբեդուզ էթում են թաքավորի կուշար:

Թաքավորն ու թաքուլին նսառուկ ին թախաի վրեն: Գողտլին խարց ու րարով անելուց յեառ, թաքավորը խարցրեց Սաթոյի մասին, թե իմալ ա, նամակ-մամակ դրում եք հիրար: Մտխլաս, թաքավորը Գողտլին մանդրամասն խարցնում ա Սաթոյի մասին, լավ տկի անից հիմանում ա, նոր թաքավորը Գողտլին ասում ա, էն ինչ որ հիրանք լսեր են Սաթոյի մտախն:

Գողգոթը որ լսում ա, թե իմալ են հիրան քվորը բամփասում ու վարքարեկում, սութ ու մութ բաներ սարքում, բոտու վրեն էլ չի համփերում, վերցում թաքավորին ասում ա.—Ես ինչ որ տեսում եմ, ասում եմ հնչ թե ընդու խամար, որ Զամրախը անպահման առնի իմ քվորը: Զամրախը թո ջ'ոչ վնդիրի ախճկան առնի, բան չունեմ ասելու, համա ես իմ քվոր պատիվն ու նամուսը պարտավոր եմ կանքովս պաշտպանելու, չումքի իմ քուրը մաքուր ա և մեր ծնողներն էլ վոյսաթ են արե, որ մենք մինչև մեր մայ ու գերեզման հիրար պաշտենք: Հիմի որը որ իմ քվոր մասին էտենց բաներ ա խոսում, թո մե խատ փաստ բերա, կամ մե բարաթ: Թե բերեց, ցույց ավեց, թաքավորն արրած մնա, դու ընծի խան կախարան, յա էլ չէ գնդահարա. համա, որ չբերեց, էտ սութ ասողին խան կախարան:

Գողգոթ էտի ասավ, հելավ դիխոռ-դիխոռ, թաքավորին զլոխ տվեց ու դնաց հիրան սեյնակր: Գողգոթի հեղեկից դնաց նաև Զամրախը, խասավ Գողգոթին ասավ.—Գողգոթ ջան, ես քեզի հավատում եմ, ինչ ուզում ս հլնի, ես քո խեան եմ, քո պաշապանը:

Զամրախն էապեսա ասավ, հելավ զնաց հիրան սեյնակր:

Հիմի էլի խարարը աանք ջ'ոչ վնդիրից:

Ջ'ոչ վնդիրը աենում ա, որ հիրան ասածներին հիմի էնքան էլ բանի տեղ չեն դնում, չեն հավառում, փաստեր են ուզում, հինքը շանվորթի մարթ հլնելով, մաածում ա, թե իմալ անի, որ Սաթույից մե բարաթ բերա, որ Գողգոթին քյալն աա անել, հինքն էլ խասնի հիրան նպաաակին: Շատ միաք արավ, քիչ միտք արավ, մե օր էլ նստուկ հիրան օթախը էլի մաածում էր էտ մասին, մեկ էլ աեսավ պատի ծակից մե խատ չազլիկ մուկ դուա էկավ էս յանր խոխտեց, էն յանր խոխտեց, ախտի վրեն մե խատ արծթե չայի դթալ կեր հնդուկ, էա մուկը գթալն առավ ու փախավ մաավ պաաի ծակը: Ջ'ոչ վնդիրը էաի որ աեսավ, մտածեց. չնի, որ էա մկանը բռնա, առնի խետը էթա խայոց առն, դռան արանքից, յա էլ չէ մե կերպ մկանը թողա Գողգոթնց առն, էթա էնդեդից մե բարաթ բերա Սաթույից, աանա թաքավորին նշանց տա, հասաաաա հիրան ասածները, որ Գողգոթի ումորր սեցնա:

Ջ'ոչ վնդիրը էա նպատակով թնլնք դրեց հիրանց առնը: Մե օր, էրկու օր, մախլասի մե օր էլ հառավոա հելավ աեսավ, որ էա մուկը հնգե թնլնքը: Վնդիրը վրա խասավ, թալաքը վերցրեց: Մուկը վախեցավ, հիմացավ հիմի հիւրանր կատակացնի, մարթու լիդու առավ վնդիրին ասավ.—Աթամվորթի, բնծի մի սպանա, ինչ

ուզենաա՝ քեզի խամար կրերեմ, ուզում ես մե շափաւա մեչ թաքավորի խազինեն ինչքան հսկի, ալունք կտ, քաշեմ բերեմ քո խամար, թնքիւն ընծի մի սպանա:

Սվաա, ջ'ոչ վնդիրը վախեցավ, որ մուկը մարթու նման խոսում ա, յետ ուշկի էկավ ասավ.—Ես քեզի չեմ սատկցնի, մինակ մե պահմանով, որ հեսա ես հազրվում եմ էթամ խայոց առն, քեզ էլ կաանեմ խեսա, դու ընդե մե անից մե խաա բան պաի թոցնես: Կանա՞ էաի անել, հենա քեզի հնչ կատակցեմ, հնչ էլ կթալեմ մեր խորոզանի կազլի հառելը, խո դու ընդուն ճաշում ես:

Մուկն բսաե ձեռաց համաձայնեց, համա ասավ, որ վնդիրը հիրանր պաի սովոցնա: Վնդիրն էլ ասավ.—Ես քեզի հմեն ինչն էլ կսովոցցենեմ, համա դու էլ էնենց պաի անես, որ հնչ մե մարթ բաու մասին հնչ աենա, հնչ էլ լսա: Ըգգուշացնում եմ, որ մեկն ու մեկը հիմացեր ա էտ մասին, ես քեզի կսատկցենեմ:

Հիմի խարարը տանք Սաթույից:

Գողգոթի էթալուց դենը Սաթուն մդնում ա հիրան սեյնակը, սկսում ա ձեռագործ անել. քյարզյախը դրուկ հառելը Գողգոթի նկարի խես, հնչ մե դնն ներս ու դուա շանում, կ'արավաշներին էլ պազվիրում ա, որ հնչ մե մարթի առն շթոզան, որն էլ ուզում ա հլնի, կնիկ, ազամարթ, ազա, ախճիկ, ազդակտն, բարեկամ, դուր ու դրուկեց, մե խոսկով հնչ մե էրկու հոգնան չպաի մդնի առնը, չուր հիրան ախպերը չդա: Հինքն էլ հառավոա հլնում էր վեր, հիրան սեյնակը կարքի էր բերում, լվացվում էր, խաց-մաց ուտում, չայ խմում, ախպոր պաակերը դնում հառելը, հիշկում ա վրեն, պաշում, քսում հերեսին, կառոան առնում, կրնում հիրան քյարդիսին, չուր մութը մթնում հլնում քնում, հառավոա հլնում էլի հիրան բանին:

Հառչի նամակը Սաթուն որ Գողգոթից ստացավ, առխալինցավ, որ ախպերը սազ-սալամաթ ա, համա քանի էթում էր ախպորը դրհա էր կարոտնում, անհամփեր էր դառնում, դսում մե թխկոց, կամ մե ձեն էր լսում, տեղից թոնում էր վեր. կանչում էր հիրան քոծին, խաղցնում, թե էա ի՞նչ ձեն էր:

Մե դնն էլ էլի էտենց նստուկ, Գողգոթի պաակերը հառելը դրուկ, հիրան դործն էր անում, մեկ էլ քոծը էկավ ներս, ասավ.—Գողգոթի կշաից մե խատ բնգրդյան ա էկե, ուզում ա քե աենա:

Սաթուն քոծի վրեն նեզացավ ու ասավ.—Հնչի՞, դու չես դիդում ես, որ ես հնչ մի ուրցեզեն իմ հառքի աակը չեմ ընթունի, չուր իմ ախպերը չդա:

էտ ռազրգայանր թե իմ ախպորից նամակ ա ըն-
րե, դնա ձեռնեն առ, շնորհակալ հելի, հարի: Հի-
րանն էլ ասա, որ ես խիվանդ եմ, չեմ կանա հի-
րանը ներս առնել:

Քոծր դնաց, բազրգայանին էտենց էլ ասավ:
Բազրգայանը նամակ չէր բերե, գիվա թե, Գողոլն
ու ասե թե. «Կէթաս քվորս կտենաս, կրարեես, իմ
մասին կպագմես, գլնես գթաս, էլ նամակն ի՞նչ
ա, հետա դու նամակ ես, կէթաս...»:

Բազրգայանը շատ ասավ, խնթրվավ, որ հիրա-
նը ներս թողնե, համա քոծր ներս չառավ, դուռը
ծակեց մտավ տունը: Բազրգայանը քոռ ու փոշ-
ման թողեց, հոռո հելավ դնաց:

Դու մի ասա, որ Գողոլը թաքավորի հառեչ
էտենց պայանջ ա դրե, թաքավորն էլ հավաքե
հիրան համեն վազիր վաքիլներին, նազրներին,
սենեկապետներին, մե խոսկով համեն պալատա-
կաններին, ասեք ա.—Գողոլի քվոր մասին որը
որ լուրեր ա տարածում, թո էտ ախճկա մոտից
մե փաստ բերա, թե չէ՝ էտ համեն սութ ու մութ
բաներ են, ըտով ուզում են խելաճ ախճկան ա-
նեն խախկ ու խտլտառակ:

Ըստե ջ'ոչ վազիրն հիրանն առնում ա, էլ ձեն-
ծպտուն շխանում, էթում ա տուն, միտք ա ա-
նում, միտք, վերչը, մե էրկու օր յետո, դալում ա
թաքավորի կուշտը ասում ա.—Թաքավորն ար-
րած մնա, ես խիվանդ եմ, խնթրվում եմ ընծի
մե ամսով իզին տաս, ասում են էն խայոց խո-
դում տաք ջուր կա, որ ընզու մեչը լոխկնամ մե
քանի դան՝ կլավնամ: Հիմի քեզից մունաթ կա-
նեմ, որ ընծի թողես՝ ես էթամ, բալքի լավնամ,
դամ:

Թաքավորն ասում ա.—Դու սազ-սալամաթ
իր, էա ի՞նչ պատայտվ քեզի խեա, հնչի՞ նա-
զյաստան դու խիվնդտը:

Ջ'ոչ վազիրը ըսե թազադրուն վիզ ա թալում,
շտտ ա խնթրվում, որ թաքավորը հիրանը մե
առժամանակ իզին տա:

Նոր ըսե թաքավորը հավատում ա ջ'ոչ վազիր
խոսկերին, մե ամսով իզին ա տալում, ասում
ա.—Լտվ, գնա, լավցի, հարի տենանք:

Ջ'ոչ վազիրը իզինը որ առնում ա թե չէ, ան-
բնալը սկսում ա հիրան թազարուքը տենալ, բա-
զրգայանի շորեր ա խաքնում, դառնում ա բա-
զրգայան ու հնդնում ա ճամփա, դրա խայոց եր-
դիրը, դրա Գողոլի քաղաքը: Էլ ի՞նչ խիվանդ, էլ
ի՞նչ տաք ջուր, էթում ա որ մե ֆանգով Սաթո-
յից մե բարաթ ըրես, որ հաստաաա հիրան մո-
կոնաժ սթերը: Ըտու խամար էլ էն սովորցրուկ
մկանն էլ դնում ա մե լտվ կ'ութու մեչ, ոնչ մե
մարթ էլ տենում, կ'ութին բառցում են դավի
վրեն, դիվա աբրանք ա ու, հայդա, էթում են:

Ջ'ոչ վազիրը որ էթում ա, էտ խոսակցութեն-
ները սկսում են: Էտ խոսակցութենները որ
սկսում են, մե օր եփ Զամբախը դալում ա
Գողոլի կուշտը, շատ են խոսում զեպից-դեպից,
տալում-առնում են, վերչը Զամբախն ասում ա
Գողոլին.—Դու ուշագրութեն դարցրեր ես, որ էտ
ջ'ոչ վազիրի էթալուց էս յանը էլ Սաթոյի մասին
չեն խոսում, չեն ըամփասում:

Գողոլն ասում ա.—Ջ'ոչ վազիրը սազ էլ հինքն
էր բաներ մոկոնում ու պորիկացի անում, թե չէ՝
իմ քվորը ըսաե որն ա ճաշնում, յտ էլ չէ՝ ընզու
մասին որը կանա խոսա, շումքի նա հիրան օ-
րում տնից դու չի էկե: Համեն ջ'ոչ վազիրը սար-
քեր ա, որ դու իմ քվորից ձեռ քաշես, հիրան ախ-
ճրկան ուզես: Էնենց որ, Զամբախ ջան, դու լավ
մտածա, ես քո գլոխը չեմ կապում իմ թաղան
քվոր խետ:

Գողոլի էտ խոսկի վրեն թաքավորի ազեն մե-
շու առվավ, նեզացավ ու ասավ.—Գողոլ ջան,
ախշտը հսնի, ես իմ խոսկի տերն եմ, թո որն ինչ
ուզում ա ասա, իմը կա յա՝ Սաթոն ա ընծի խա-
մար, չկա յա՝ Սաթոն ա. զաթի դու էլ քեֆտ քոք
պտխա, ըտոնց հմնի հաշիվները ես մե օր կտե-
նամ, դու հլա սարը արա:

Հիմի դառնանք դրա ջ'ոչ վազիրին:

Էա ռազրգայանը որ էկեր էր, ուզում էր Սաթո-
յին տենար, խո իսկական բազրգայան չէր, ոնչ էլ
Գողոլի կշտից էր էկե, էտի համա ջ'ոչ վազիրն էր,
որ ուզում էր մե ֆանգով մզներ Սաթոյի կուշտը,
որ մե բտն ընդեղից թոցներ, տաներ թաքավորին
ապացուց աներ, թե՝ աես Սաթոն էսենց, էսենց
ախճիկ ա: Հտմա որ տեսավ ըսն դու չպսլում
ա, հիրան սորվցրուկ մկանը ըաց թողեց, մուկն
էլ փոխավ, դոան արանքից մտավ, գնաց տունը:

Գողոլենց տնեցիք սազ էլ քնուկ ին: Մուկը
զես հիշկեց, դեն հիշկեց, տեսավ մե ամալին
բտն չկտ, որ առնի փախնի, գնաց պատի մեչ մե
ծակ պթավ, մտավ էտ ծակը, պախկվորավ:

Հնցավ էտենց մե առժամանակ: Համեն դն
էտ մուկը դու էր դալում Սաթոյի սեյնակի մեչը
մտն դալում, բանցրնում էր ստուլի վրեն, կառա-
ֆաթի վրեն, մզնում էր տան ծակը, ճուզը, որ մե
րան գթնի, տանա տա ջ'ոչ վազիրին, համա զանդ
չէր դթնում:

Ջ'ոչ վազիրի իզինի վառեն հա մոտկնում էր
վերչանալում, համա էտ անիծուկ մուկը հրը բան
չէր արե: Գիշերները մուկը էթում էր կուշտը, ա-
սում էր, որ էնենց հարմար ըսն չգթնում, որ
առնի բլդուզը, փախնի գա:

Սաթոն մկանը մե քանի դան տեսեր էր հի-
րան սեյնակում: Հիր քոծին ասեք էր, որ տունը
մուկ կա, հինքն էլ վախենում ա մկից: Բերին Սա-

թոյի օթախր թանձր դրին, համա մուկը ձեռնասնդուր մուկ էր, սկի թանձր յանը չէր էթում, ինչ էլ ուզում ա մեղը դրուկ հլնեի:

Մե օր Սաթոն հաղորդավ, որ լոխկներ, կանչեց հիրան քոծին, ասավ.—Ձուր տաքցրա, համեն ինչ հաղրա, որ ես դուխս վլամ:

Քոծը որ համեն ինչ հաղրեց, ջրերը քաշեց խովնեց, էկավ խանսամին ասավ.—Շուտ արա, հելի էթանք, ջրերը պաղան:

Սաթոն էլ հելավ, վազ-վազ, վրայի շորերը խանեց, մաղերն հրցկեց, մատից ախպոր տվուկ մազնիքն էլ խանեց, թողեց ստուլի վրեն, հնգավ քոծի հեղեը, դնաց լոխկնալու:

Մուկը էտ նմուտին ծակի դեմ կայսուկ կ'անւումու էր քաշում: Իմալ որ Սաթոն հիրան մաղնիքը խանեց, թողեց ստուլի վրեն ու գնաց, մուկը դուխը ծակից խանեց, հիշկաց դես ու դեն, տեսավ որ մարթ-մաղաթ սեյնակում չկա, դուս էկավ, վաղուկ հելավ ստուլի վրեն, Սաթոյի մաղնիքը առավ ըղղուղն ու, հայդա, փախավ, մտավ պատի ծակը: Ընդե մնաց շուր մուկը հնգավ, համեն քնան, նոր հինքը ծակից դուս էկավ, ըղղուղութենով վաղավ շուր դսի դուտը, տեսավ, որ պայակներն էլ են քնուկ, դուս արանքից հնգավ ու պատի տգնեով վաղավ ջ'նչ վանդիւրի կուշտու: Մաղնիքը ըղղուղից խանեց, տվեց ընդուն, հինքը հելավ, մաավ հիրան կ'ութին:

Ջ'նչ վանդիւրը էաի որ տեսավ, հելավ ախշքով մեկ, անլեանլը սկսեց հիրան վեշերը հավաքել, կապել-կտպկտել, որ հառավոտ հլնի ու հնգնի ճամրախ:

Վանդիւրը թո հնգնի ճամրախ էթա, մենք յարցնենք Սաթոյի հալից:

Սաթոն որ ջրից դուս ա գալում, խաքնում ա, դալում ա հիրան սեյնակը, մեկ էլ թանձրալի տենում ա, որ մաղնիքը հիրան մատը չէ: Էս յան մաղնիք, էն յան մաղնիք, մաղնիք չկա, մաղնիքն հելավ մե կտոր խաց կուրավ: Խեղճ Սաթոն քիչ ա մնում ծոի. մտածում ա, տալում ա, առնում ա, համա չկանում ա հիշա, թե մաղնիքն ինչ հելավ: Մե քանի դանք քոծին ա խարցնում, էն մեկել կ'անւումաներին ա խարցնում, համա մաղնիքը չկա ու չկա. մաղնիքը ըղղով թգով կուրավ: Հսնում ա մե օր, էրկու օր, մե շափաթ. խեղճի քունն հաշկերից կղրում ա, հա մտածում տ մաղնեքի մտսին, որ հեքուց, էլօր ախպերը դա՛ ի՞նչ ջուղար աա, ինչ ասի: Մեկ էլ նազայսաաան մուկը հնգնում ա միաը, տենում ա, որ քանի մաղնիքը կուրեր ա, էն անտեը մուկը էլ չի էրեում:

Հիմի Սաթոն թո ըստե մաղնիքին ման դա, մենք խաբարը տանք ջ'նչ վանդիւրից:

Ջ'նչ վանդիւրը խասնում ա տուն թե չէ, առնում

ա մաղնիքն ու վազնում ա թաքավորի կուշտու: Էթում, դուխ ա տալում, կայնում: Թաքավորն ասում ա.—Յա՛, էկեր ես, վանդիւր, դ'պաղմա տեանք, իմա՛լ ես, իմա՛լ չես, դացիր խայոց տուն, տաք շրերում լոխկցար, լավ լավցար. նստի, մեկ-մեկ պաղմա տենտնք:

Ջ'նչ վանդիւրը էրկու խոսկով սթից ասավ, որ խայոց խող ու ջուր շատ լավն ա, հինքը աաք ջրերում լոխկցավ ու լավցավ.—Համա դլխավորը էտի չէ, թաքավորն արրած մնա, դլխավորը էն ա, որ ես դացի, էա քո խաղնած Գողդի տունը դթա, ասի էտքան, որ էա տղի քվոր մասին լավ ու վաա են խոսում, անամ էաի սութ ա, թե օղորթ: Մեխկս ինչ պախեմ, ես էլ, մե օր հելա դացի ըտու քվոր առնը, ասի. «Կ'արիւր մարթ եմ, թող դամ քո տունը, մե դիշեր մնամ, հլնեմ էթամ»: Սխճիկը դուտը րացեց, ընձի համեցեք առավ, ես մաա ըտու տունը, գիշերը մացի ըտե, քնանք իմալ մաղթ ու կնիկ, հառավոտ հելա, դացի իմ րանին: Ըաուց դեն, թաքավորն արրած կենա, համեն օր էթում ի, քնում ի, էտ ախճկա ծոցը: Գրուաա որ էա շան ախճիկը շատ խորտ էր, համա ինչ անես, որ կախպա էր: Վերջի դիշերն էլ որ դացի, քնա կուշտու, հառավոտ խանեց էսա մաղնիքն էլ ավեց ընձի, ասավ. «Եմ էս մաղնիքը քեզիկ ընձնից հիշատակ եմ աալում»: Ես էլ մե քանի դաղ կտոր-մտոր տվի, հելա էկա: Հիմի անաը, որ էտ քո դովացած դաղեն՝ Գողդը, ինչ շանվորթին դուս էկավ, սաղին խափեր էր, մաղների վրեն խաղճնում էր: Բը էն քո միամիտ, ասու դառ աղեն՝ Ջամրախը, իմալ էր խեղքամաղ հլնում էա դաղի, մեկ էլ ընդու լանան քվոր խամար: Ես կարծում եմ, որ դու, թաքավորն արրած մնա, հիմի կհավատաս քո խոնար ծառա՛ ջ'նչ վանդիւրի խոսկերին ե կկատորես քո դրուկ պահմանը, էն լակոաին կախաբան կխանես:

Թաքավորը ձեռաց հավաքում ա նազիր-վանդիւրներին, վանդիւրներին, մեկ էլ սենեկապետներին, մե խոսկով սաղ պալաաականներին, թաքուլուն, Ջամրախին. մարթ ա հղրկում, որ յաթարով Գողդին րերեն: Թաքավորը նսաավ թախտին, թաղը դրեց դլխին, աչ յանը նստավ թաքուլին, ձախ յանը՝ Ջամրախը: Թաքավորն ասավ.—Ես ձեղի, հմնիտ հավաքեր եմ, որ ասեմ էն խոսակցութենները, որ կեր Գողդի քվոր մասին, համեն հաստատվում ա: Ես պահման ի դրե, թե որ պտի էտ ախճկանից, ախսինքս Գողդի քվորից, մե րարաթ րերվի, որ հասաատի ընդու լիւրի հլնելու: Հիմի մեր ջ'նչ վանդիւրը, որ իզին էր առե, գացե խայոց տուն քշկվելու, դացե էա ախճկան դթե, քանի օր քնե ըտնեց տունը, վերջն էլ էտ կ'անջղը, հիրան մատի մաղնիքը խանե,

տվե ջ'նչ վազիրին, հետա էա էլ էտ մադնիքը,—
թաքավորը էաի ասավ ու Սաթոյի մադնիքը հի-
րան ջեբից խանեց ու համինն նշանց ավեց,—
պահմանի համաձայն հիմի Գոգոլին կախարան
պատի խանենք, զը ասեք անանք, ի՞նչ եք ասում,
ի՞նչ անենք:

Սագ սկսին ըոռալ-ըոռըրոռալ, համինից շատ էլ
ջ'նչ վազիրն էր ըոռում՝ կախարան: Եփ մեշու
հանդարթան, Գոգոլն ասավ.—Դրուսա ա, էաի իմ
մադնիքն ա, որ ես թողեմ ի իմ քվոր կուշաը, որ
գնեմ մաար ու մաաից շխանեմ, չուր ես դառնի
առն: Իմ գրուկ պահմանի համաձայն, ընձի կա-
խարան պաի խանեք, համա ես խնթրվում եմ իմ
աեթ թաքավորից, որ ընձի, յաթարով, մե, յա էլ
էրկու օրով էթամ առն, քվորս անանք, դամ
հլնեմ կախարան:

Ջ'նչ վազիրն ասավ.—Թո էթա:

Հույս ունեթ, որ Գոգոլը դա առն յեոսոա-
յեոսոա, սուս ու փուս քվորը կսպանա, հիրանն
էլ կրեռեն, էսաե կխանեն կախարան, գործը
կվերջանա, կեթա:

Թաքավորը համաձայնավ, կարգադրեց յա-
թար կաղմեն, ճամփի պաշար վերցնեն, որ հրնգ-
նեն ճամփա, էթան, շուս գան, որ Գոգոլին խա-
նեն կախարան:

Գոգոլն էլ էտենց էլ մաաթեր էր, որ էթեր,
քվորը ասը սպանեթ, նոր դեր, հլներ կախարան:

Հիրգունը Զամրախը գնաց ըոռատոռն, Գոգոլի
կուշաը, Գոգոլի խեա խոսաց, սիրա ավեց, ա-
սավ.—Ես ջ'նչ վազիրի ասածներին չեմ հավա-
տում, ես իմ իմալ ա թոցրե, բերե էա մադնիքը:
Դու լավ աըիր, որ թաքավորից իզին առար, որ
էթաս քո յերգիր, անաս ըանն ինչումն ա: Գոգոլ
ջան, ես քո խեա եմ, իմ ծնողներից գոխաուկ գա-
լում եմ, իմ խեա կհլնեն իմ թիգնապայաները, որ
թնվնթյալի էա ջ'նչ վազիրը ճամփին մե օյին
չգա քո գլոխը, դու ըսկի մի մաաթա, թե որ քո
քուրը էա փեշակի աեըն էլ հլնի, իհարգա ես չեմ
հավատում, մեկ ա՝ ես իմ խոսկիս աեըն եմ:

Հեկավ պոռաի արավ Գոգոլի խեա, դնաց
հինքն էլ հիրան թնդաըրուքը անալու՝ էթալու
խամար:

Մե օր յեաո հեկան հնգան ճամփա. Գոգոլին
մե ճամփով ասարան, Զամրախն էլ մե հուրիշ
ճամփով գնաց: Էթալու վախան էլ հիրան հավա-
ղաըրիմ կաղնվաշին ասավ, որ էրկու օր կհսնի,
հիրանը ման գգան, թո հինքը գոխաուկ, որ մարթ
չհիմանա, խորն ու մորն ասա, որ ինքը գացեթ ա
Գոգոլի խեա, համա թո մարթի ըան շասեն չուր
իրենց գալու:

Ճամփին Զամրախի խումրը էկավ խաովավ
Գոգոլի յաթարին, հիրար խեա քախծը անուշ կ'սա

անելով գացին: Էն ինչ Զամրախն էր, հա էլ Գո-
գոլին ասում էր, որ էաի ջ'նչ վազիրի սարքուկ
րանենն են. Գոգոլն էլ էր կաթկածում, համա
խանչալը զանիր սիրդը՝ մե կաթ արուն չէր էթա,
էնքան որ սիրդը հելուկ էր:

Գացին, գացին, շաա գացին թե քիչ, հիրանք
գիրդսն, վեըը խասան հալոց առնը՝ Գոգոլի քա-
ղաքը: Եփ որ մոակցան Գոգոլենց ասնը, Զամ-
րախն ասավ.—Գոգոլ ջան, ախպեր ջան, ես էլ
եմ քո խեա գալում քո առնը:

Գոգոլը ըսկզրում չէր ուզում համաձայնվել,
համա վերըը կոգրվավ ասավ.—Հարի էթանք:

Ձիանքն խաո-խաոը քշելով էկան, դարդիսի
հառեը կայնան, Գոգոլը թայմենց, աեսավ, որ
հնց որ թողե դացեթ ա, էլի էն կարք ու կանոնը
մացեթ ա, հնչ մե հուրիշ մարթ-խան հիրանց
դոնեթի կուշաը չէր էրեում, պայակնեթն էլ կայ-
նուկ ին հիրանց աեզը: Գոգոլը էաի որ աեսավ,
թեքվավ դրս: Զամրախն, հանգճին ասավ.—Այ
ախպեր, էսաե համեն իմ դրուկ կարք ու կանոնն
ա, հալրաթ քուրս խորամանգութեն ա անում, ցե-
րեկով մարթ-մուրթ մեր աան յանը չթողում, հա-
մա մուրթ որ հնգնում ա, ըալի մեր առնը դաո-
նում ա քյովանսարա: Հարի ձիանքը քշենք, մեր
առնը հանենք, էթանք քաղքի կ'րաղը ման դանք,
չուր մղըրեր աա, նոր հլնենք գանք:

Տղերք էանց էլ աըին: Հիրգունը որ մուրթ
հնգավ, մայլեքից մարթ ու մուրթի հար կգրավ,
Գոգոլն ու Զամրախը հեկան էկան Գոգոլենց ասն
յանը: Գոգոլը կայնավ աալգեն, Զամրախը մոս-
կրցավ դարգխին, յավաջ դարգախա ափեց, պա-
յակը էն յանեն խարցրեց.—Էն ո՞րն ա:

Զամրախն ասավ.—Կ'արիր մարթ եմ, էս էր-
կու սհաթ ա ձեր քաղկում ման եմ գալում, մե
աեղ չեմ գթնում, մե մարթի խարցրի, ընձի ասավ,
որ գամ ձեր առնը, դուք կունթոնեթ:

Պայակն էն յանեն յեոսոաուկ ասավ.—Ո՞րն
ասեր ա, ասողի խոր քյալեն.... էս առնը հետա
էրկու աաըին թմում ա, որցեղեն հա չգրեթ ա,
իմ աաղենը, իմ ախպերը ըսաե չէ, մինակ ընդու
նշխուն քուրն ա մացե, էն էլ յերթում ա կերե, որ
չուր հիր ախպերը չգա, հնչ մեկի վրեն դուռ չրա-
նանք: Շուս թող գնա, թե չէ խանումս կհիմնա,
լավ չի հլնի, ընդու սիրդը, գաթի էս քանի վախ-
թը դիզ ա:

Զամրախը նորից խնթրվավ, աղաչեց ասավ.—
Գնա խանումիա ասա, ըալի էնի հոժար ա:

Պայակը էա խոսկի վրեն դհա հնգնավորավ,
կաղղավ, ասավ.—Քեզի ասում եմ՝ թող ըսաե-
ղից հոադ հելի գնա, թե չէ՝ քեզի գյուլախորով
կանեմ: Էա վի՞ր խանմի մասին ես էանց ըա-
նեթ խոսում, թող, կորի էսաեղից:

Ձամրախը սուս ու փուս քաշվա՛վ կ'րադ, գնաց Գողթլի կուշտն ու փաթթվա՛վ ընդուն, ուրախ-ուրախ ասա՛վ.—Լսացիր, ի՞նչ քուֆր-քաֆար կերա պայակից. դե հելի էթանք, մեշու ման գտնք, թաղադրուն յետ գանք, էս դան դու դուռը տփա ու խոսա:

Հելան էտտեղից դացին: Տղերք գացին մե խելակ քաղկի բոլոր ման էկան, նորից էկան կայնան Գողթլինց դարգխի հտոնչ: Որ էկան կայնան դարգխի հտոնչ, էս դան Գողթլը դարգխալը տփեց, էն յանեն ձեն տվին.—Ո՞րն ա:

— Բիձա հաշո, էտ դու ես, դարգխալը բաց, ես եմ՝ քո ախպրացուն, Գողթլը:

Պայակը մեշու շփոթվա՛վ, համա ասա՛վ.—Գողթլ դո՞ր ա, եսիմ Գողթլ շնդատտն ա, Ձինումտ-չի՞ն ա, դո՞ր ա, դու ո՞րն ես:

Գողթլը թաղադրուն ասա՛վ, որ հինքը Գողթլն ա, խարցընց հմնից, թե՛ Ավոն իմա՞լ ա, Գեոն իմա՞լ ա, մտխլտս հմեն կ'անվանջների տները տվեց, վերջն էլ ասա՛վ՝ ըր խանում Սաթոն իմա՞լ ա: Պայակը որ Սաթոյի անունը լսաց, էլի եռստտա՛վ.—Քո ի՞նչ բանն ա, թե իմ խանումն իմա՞լ ա:

Գողթլը նորից ասա՛վ, որ հինքը Գողթլն ա՝ Սաթոյի ախպերը.—Բը դու իմ ձենից էլ չես ճաշնում, այ հաշո բիձա:

Ըտե նոր հաշո բիձեն ֆայմա՛վ, որ էսի Գողթլի ձենն ա, համա էլի առանց դարգխալը բանալու, վաղա՛վ տուն, սաղին խանեց վեը, թե.—Հե-լեք, Գողթլ աղեն էկեր ա, հենա դարգխի հտոնչ կսլնուկ ա:

Մե բոպա դախ, սադ տնեցիք դուս թափան, մաշալներ վառին, արին չրաղվան, որ աեսան իսկականից Գողթլն ա, սաղ էլ ջուկ-ջուկ էկան, փաթթվան, գրկեցին, սիրեցին ու ձենների վրեն աարան տուն: Ձամրախին էլ հիրան դյուրա պատիվ տվեցին, ընդուն էլ տարան աուն: Որ աարան տուն, Սաթոն հելա՛վ դռների մեշը բոռաց ու հնդավ ախպոր դիրկը, ուշկ դնաց, նոր բան ջուր բերին, դանին Սաթոյի հերես, հանդջներ քաշին, օլրին, մե էրկու չափալղ դանին, տալան հիրան շթախը, նոր յավաշ-յավաշ ուշկը էկա՛վ վրեն:

Չուր Սաթոյի ուշկը բերին, Ձամրախը, որ հառչի դան էր տնում, իմտլ հաշկը առնում ա Սաթոյին, հիրան ուշկն էլ դենն է էթում. Ձամրախ, հեսոր ես մեռե, թե հեքուց: Հավարը որ դնում են, Գողթլը նոր դեփդանդեթ, վրա յա խասունում, Ձամրախի ուշկն էլ ա վրա բերում: Մեշու յետ ստղ էլ դինջում են, հավաքվում են Սաթոյի սեյնակր:

Գողթլը նստում ա Սաթոյի կողքին, ձեններն

առնում ա հիրան հափերի մեշ, սկսում ա քվոր մաղներին աուրիկ-մուրիկ հիշկալ: Սաթոն ձեռաց խասկցա՛վ, թե ախպերն ինչի յա ման գալում, էլ չգիմացա՛վ, բիրդան ախճկա սիրդը ըլա՛վ, հնդավ ախպոր թևերի վրեն: Գողթլը խարցընց.—Մադ-նիքը հո՞ւր ա:

Սաթոն հոնքոտալով ասա՛վ.—Կորեր ա:

— Իմա՞լ տ կորե:

Սաթոն պաղմեց իմալ, որ հելեր էր, որ ընգուց դեն էլ իշքան ման են գալում, չեն կանում գթնեն:

— Դսի մարթ հելե՞ր ա ըստե,—եռստաժ խարցնում ա Գողթլը:

Համա Սաթոն պաղասխանի աեղ սկսում ա լալ, որ ախպերը հիրանը չհավատում, կաժկածում ա:

Ձամրախը մե խատ հիշկում ա Գողթլին, թե՛ հնչ ե՞ս ախճկա սիրդը կողրում, մեղի հմենն ինչ պարդ ա ու խարցնում ա Սաթոյին.—Իշքա՞ն վտխտ կհլնի, որ մաղնիքը կորեր ա:

Սաթոն մեշու մտածում ա, յետո ախպոր միջոցով ասում ա.—Տաս-տսնխինդ օր կհլնի:

Գողթլը որ փոշմանվել էր, որ քվոր խետ էտենց էր խոսացե, մաղերը մաժելով ասա՛վ.—Մի ամանչի, էտի իմ ամենալա՛վ հնդերն ա, թաքավորի տղեն ա, ես էլ դրանց պալատումն եմ արրում, անունն էլ Ձամրախ ա, շլկովանք վախաին շժանոթացրի, խտովուկ ինք հիրար:

Սաթոն որ ասա՛վ տաս-տսնխինդ օր կհլնի մաղնքի կորելը, ըստե թաքավորի աղեն ասա՛վ.—Բանի մեշը բան կա,—ու հիրան աչ ձեռի բուլթը կ'այիմ կժեց,—չնեղանաս, Սաթո ջան, դու հըլը հիշա էտ վախտերը, սկի կ'արիր մարթ, կնիկ, էրեխա ձեր աունը չմաե:

Սաթոն նորից յերթում կերա՛վ, թե իմ ախպոր էթալուց էս յանը, մեր տունը, մեկ էլ հեսոր ա, որ դուք էկեր էք, իմ ախպոր խետ: Գողթլը խարցընց.—Լա՛վ, մարթ չէկե մտե մեր տունը, ըր հուրիշ անասուններ, յա էլ չէ ջանավարներ էլ չեն էկե, շուն, կատու, խոզ, կով, տո ես ինչ դինամ մուկ... Հիմի էտ մաղնիքը չենք գիդում, իմալ ա հնգե Ձամրախենց թաքավորութենի ջ'ոչ վանդիրի ձեռը և տխրով մեկ բոռում ա, թե հինքը քո խետ նստե կայներ ա, էտ մաղնիքն էլ դու բախշեր ես հիրանը: Հիմի ըսու խամար ընձի կախարան են խտնում: Դու պտի հմենն ինչ մեղի դուգն ասես:

Սաթոն լացա՛վ, հնդավ ախպոր ողները, յերթում կերա՛վ, հիրան արեւով, հիրտնց ծնողների դերեղմանով, որ հինքը ո՞նչ մե մարթի հերես չի տեսե հիրան էթալուց դեսը.—Մեկ-մեկ խարցրա մեր կ'անվաններին, ծառայողներին, թե որ մե-

կը ասի, որ մեկն ու մեկին տեսեր ա մեր հառքի տակը, հետա էս էլ թաքավորի տղեն, ըստու դեմը ընծի ղինա-ղինա բռթաւ:

Սաղով մացին մաթալ: Բը որ մաղթ չէկն ըտոնց տունը, բը մաղնիքն իմա՞լ ա հնդե ջ'նչ վազիրի ձեռը:

Մեկ էլ ննգնստան Սաթոն թոսով, հելավ վեր, ասավ.—Ախդեր ջան, դու ընծի լավ օքնիր, որ ասիր, խարցրիր, ջուն-ջանավար էլ չէկն մեր տուն: Ախարտինք ջան, հենց էս մաղնիք կորելու օրերին իմ սեյնսկում, հա մե խաա մուկ էր էրեում, հլա կ'արավանջներին ասի, թալաք դրին, համա չըովավ: մաղնիք կորելուց յետո, էլ էտ անիծուկ մուկը շերեաց: Թե էս ինչ հրաշք էր, ես չեմ կանա ասի:

— Դը որ էանց ս,—ասավ Զամբախը,—հարեք էլ ժամանակ չկորցնենք, ընծի խամար հըմմեն ինչ էլ պարզ ա: Գողոլ ջան, էն շրիդը, որ ոլադրասում ին քո խամար, ես կքցեմ պադրաստողի վիզը ե իմ ձեռով կխեխտեմ: Սաթոն ուզում ա, թո մնա ըստե, ուզում ա, թո գա մեզի խեա, համա լավ կհնի, դա մեր խեա: Հեկեք էթանք, իմ տրոնը յետում ա, ես դըա խերը կանիծեմ, յովաշ խասնենք անդը, դու կաննաս իմ անեկը, էլ դու գործ չունես, ես գինամ, Սաթոն:

Մե օր մացին, հիրանց թաղաբուքը տեսան, էն մեկել օրը հելան, իրեքով էլ հնդան ճամփա: Սաթոյին էլ աղի շորեր խաքցըին:

Մե քանի օր անփոք ճամփա դալով, վերջուպետ, խասնում են Զամբախի խոր թաքավորութենը:

Սաթոյին ասնում են, մե խալվաթ անդ պախում են, հիրանք դալում են լամիդ են հլնում թաքավորին:

Թաքավորն ձեռաց, սինոթի յտ նոսում, կանչում ա Գողոլին, ասում ա.—Հիմի համողվար, որ քո քուրը լիրփ ա:

Գողոլը ձեն-ծպտուն շիանում ա:

Համա Զամբախն հիրանը ուտում ա, կտրտում ա, համա էն էլ ձեն շիանում, տենա վերջը ինչ ա հլնելու:

Ջ'նչ վաղիրն ասում ա.—Հաղը հեքուց կիրակի յո, բերեք հեքուց էա գյուղին խանենք կախարան, թո ժողովուրթն էլ աննա, խրադվի, որ էտենց կ'ալաթներ շանեն:

Հմնով էլ դալում են մե խոսկի, որ կիրակի օրը, Գողոլին խանեն կախարան, ընգու հելած-չելածն էլ տան ջ'նչ վաղիրին, որ հինքը էտքան շարչովավ, էա դործը դուլա բերեց:

Կիրակի օրը, շարավի մեշտեգր բերին էրկու դերան անգեցին, մե դերան էլ քցին վրեն, էտ գերնից մե խաա պինդ շրիդ կապին, ծերն էլ օղ

ալին, սապոն քսին, մե խաա էլ իշուկ դրին տակը: Կախարանը պաղքատ էր:

Ժողովուրթը հառավոտ շուտ սաղ թափան էկան շարսու, դիքները սաղ փագին հիշկում ին, թե եփ պաի թաքավորը, հիրան նաղիրներով, վաղիրներով, մե խոսկով, հիրան հնդանիքով ու պալաաակտներով դան հիրանց խամար ոլադրասաուկ անդը նսան, որ Գողոլին բերեն խանեն կախարան:

Մեկ էլ կիրաուն հնգավ ժողովրթի մեշ. դու մի ասա, թաքավորն էկավ, հիրան հնդանիքով ու ոլալաաակտներով: Ջ'նչ վաղիրը խալարո-խրալարո էթում էր թաքավորի կողովը, հիրան հեղեից էլ էթում ին կնիկը, Մանթաթը և ջ'նչ վաղիրի ուսած-փքված ախճիկը: Մնացածներն էլ դալում ին ըաոնց հեղեից:

Թաքավորը որ էկավ տեղավորվավ, տեսավ, որ Զամբախը ըտոնց մեշը չէ, համա էլ ուշադրութեն չդարցրեց, ձեռով նշան արավ, որ մալադարին, ալսինքս Գողոլին, բերեն կախարանի կուշար:

Մեկ էլ էն յանեն դրա թաքավորն էկավ մե խաա սիրուն կնիկ, գաորեք շորերը խաքին: Ժողովուրթին ճղելով, գողալով ու լաց հլնելով, գալում ա, սսում ա. ես գանդաա ունեմ թաքավորին: Զամբախն էլ մե քանի թիգնապաներով գալում ա էտ կնդա հեղեից ու օքնում ա, որ էա կնիկը խասնի թաքավորին:

Ախճիկը, որ մոակնում ու թաքավորին, գլոխ ա ալում, ասում ա.—Ես մե դանգաա ունեմ, թաքավորն արած կենա, խնթրվում եմ լսաս շուր էն մարթի կտխելու:

Ջ'նչ վաղիրն ասում ա.—Դեն տարեք էա լանտին, հիմի ինչ գանգաաի վախա ա, եսիմ ինչ ախմախ բաներ ոլաի խոսա:

Համա էա նմուտին Զամբախն էլ ա մոտկնում խորը, ասում ա.—Թաքավորն արած կենա, դու իմ խերն ես, ես դիդում եմ քեզի, թե դու իշքան խզնով թաքավոր ես, սաղ ժողովուրթը քո գլխով, արեով ա յերթվում, լսա էտ անբախտ կրնդանը, անս ինչ գանգաա ունի: Գողոլը խո չփալալ, հենա ժնջլներով կուսով, ոլալակներն էլ վրեն կալնուկ են: Ըտե թուքուլին էլ ա խնթրվում, սր էտ սիրուն ախճկա դանդաալ լուա, նոր Գողոլին կախել տա:

Թաքավորը իրավունք ա ալում էտ կնդան խոսալու: Սաղ ժողովուրթը սսկում, ձենը կզրում, լսում ա, թե ինչ ա ուզում թաքավորից էա կնիկը, որ էս նեղ մանջլին էկե կուշտը դանդաա:

Ախճիկը լոնց հլնելով տալով.—Էսի քո վաղիրը, թաքավորն հաստատեց,—ախճիկը շարունակեց,—

էսա ուն տմիս ա, որ համեն օր էտի գալում ա իմ
հաշար, ես սինակ անտար արձիկ եմ, գալում ա,
հիրան խեւ ուտելու-իմելու, լաւ-լաւ բաներ ա
բերում, ժամանակ ենք հնցցնում հիրաբ խեւ,
չոր աղոթքան լուսը. որ տոնում բացվել, հնում
մեշու փտը ա աալում ընծի, թողում էթում ա
հիրան դրոժերին: Ես չի դի գանգաւի, թե որ հերեկ
յիշեր, որ կաւ էլի էտենց քեֆ արինք, կերանք-
խմանք, հառաւորա սովորականից շատ հել իմ
հելած-չելած հաւաքե զայցաւ ա, տենաւ ըսուն
էա իմ քաշեր ինչին էր պետք: Ես սրբում եմ
քաղքի տխինչ մայլեն, մե խաա խին տան մեշ,
էս իմ տստծները կանան հաստատեն իմ գրկեց-
ները, ընդմեջ շատ ունքամ են տես, թե իմալ
էա մարթը շորերը փոխուկ, կէ իմ կուշա, գացե-
լիսի թաքաւորն արբած մնա, էն ինչ արե-արե,
յլոխն ուաա, ինթրում եմ կարքադրես իմ շո-
րերը, շուքիքը, էն մեկեկներն էլ չեմ ասում, ա-
մոթ ա, բերա աա, ես քյապիք արձիկ եմ, որդուց
էա համեն նորուց առնեմ. մեկ էլ որ դա իմ տան
բոլորը, զլոխը կշարթեմ, ընծի մեղաւոր չխանեք:

Սաղ ժողովուրթը քոր կորուկ լսում էր էա
ախճկա դանգաւոր: Մեկ էլ ջ'նչ վաղիրը էլ չհամ-
փերեց, տեղից թռաւ հելաւ, էա խեղճ տխճկա
վրեն բուաց, ասաւ.—Թաքաւորն արբած մնա,
եւ էա լրիին հառչի դան եմ տենում, իմալ որ
դուք եք հառչի դան տենում: Ես համեն օր էլ հա-
ռաւորա կառնթով գալում եմ սլալաւ, հիրդուն
կառնթով էթում եմ տուն, սաղ մեր անեցիքը
կհաստատեն: Ախար, ես ըսու հերեսը սկի չեմ
տես, չեմ դիզում ըսու անունը, որդե՞ղ ա ար-
ըում, ի՞նչ ա ուտում, ի՞նչ ա խմում, աղդ ունի՞,
աակ ունի՞, հաբուտ ա, թե քյապիք, ես չեմ գի-
դում եմ: Հում էլ, թաքաւորն արբած մնա, ինծի
վալել ա, ես հնեմ ջ'նչ վաղիրը, էս յաշին էթամ
էա լրիերի հեղեից հնգնեմ, հըլը դողումթեն էլ ա-
նեմ: Թաքաւորն արբած մնա, ես խնթրում եմ
հրամայեա, էա բոլին էլ թա կախեն, որ էլ էտենց
դուր շանա մարթու վրա:

Ձամբախն ասաւ.—Այ խեր, մե հարց ունեմ,
տա՞մ:

Թաքաւորն տեղը ջ'նչ վաղիրն ասաւ.—Տու
Չամբախ ջան, աու, է:

Թաքաւորն էլ զլիով արաւ: Ձամբախն ա-
ռաւ.—Ջ'նչ վաղիր, էս ախճկուն դու չե՞ս ճաշում,
ըսու տունը դու չե՞ս քնե, դը յերթում կեր, որ
դու դրան հառչի դան ես տենում:

Ջ'նչ վաղիրն ասաւ.—Խաղար դան էլ յերթում
կուտեմ, որ աստված, Քրիստոս, երգինք, դեպին,
ծով, ցամաք վկա են, որ ես էա տնայտկաւորն
հառչի դան եմ տենում, խորեմ իմ սաղ գերդաս-
տանը, թե ես ըստե սութ եմ ասում:

Ջ'նչ վաղիրը էա յերթում որ կերաւ, սաղ
դեսից, դենից ասին, որ էա ախճիկը սութ ա ա-
սում, ըսուն պաի պատժեն, անմեղ տեղը մեր ջ'նչ
վաղիր վրեն դուր ա անում:

Թաքաւորն դառնում ա դրա ախճիկը, խարցը-
նում ա.—Դու քո ասածները հաստատում ես, թե
կարող ա յալնիշ ես հնգե, էաի հուրիշ մարթ ա
հելե, խառնում ես:

Ախճիկն ասում ա.—Ձէ, չեմ խառնում, համա
եւ ըսուց վախենում եմ, ընծի դանն, ըսուն
բոնեք թեկը կապեք, համեն մեկ-մեկ տես:

Ձեռաց Չամբախը հիրան հաւաքարիմ թիգ-
նաւորներով դալում ա, ջ'նչ վաղիրն, հիրան գեը-
դաստանին կալմեշ անում, շրջապատում: Թաքա-
ւորն ախճկան ասում ա.—Դը մանդամասն
ողդմա, տենանք իմալ ա հել:

Ախճիկը որ տենում ա Չամբախը հիրան կըշ-
տին կայնուկ ա, թիգնապաներն էլ ջ'նչ վաղիրն
փատտե կայնել են, նոր ասում ա.—Թաքաւորն
արբած մնա, դու, քո հնգանիքը, սաղ ժողովուր-
թը լսացիք, որ էա մարթը ասաւ, որ ընծի հառչի
դան ա տենում, ուղում եք մեկ էլ խարցերեք, մեկ
ա էլի էտենց կասա: Դու՞ղ ա վաղիր,—խարցերեց
ախճիկը:

— Դուղ ա,—ասաւ վաղիրը:

— Հիմի ես էլ եմ հաստատում, որ էա մարթը
իմ հերեսը շտես, ես էլ հիրան հերեսը չեմ տե-
ս:

Վաղիր տեղից վեր թռաւ ու բոռաց.—Տե-
սա՞ք, որ ասում ի, չիք հաւատում:

Ախճիկն ասաւ.—Ցավաւ, հըլը սնոր արա,—
ու ջարունակեց,—Թաքաւորն արբած մնա, հիմի
դու լաւ լսա, իմ անունը Սաթոյա, ես Գողթի
քուրն եմ, քո տղի նշանածը, հիմի թո էտ սե
մարթը ողդմա, թե իմ մադնիքը իմալ ա հնգե
հիւսն ձեռը, որն իմ ախպոր տովկն էր, ես էա
մադնիքն ախշըքի խեւ չի փոխի, համա էտ սե-
վերեսը բաշարեր ա, մե կերպով թոցեր իմ մադ-
նիքը, որ ձեզի ու ախշըքին խափա, տեսելով, որ
հինքը դիվա իմ խեւ նստե կայներ ա: Իմ թառ-
լան ախպոր բոթ ա նստցրե, հիմի էլ դու պոի
կախարան բանցրցնել տաս, սարաք էս սե մար-
թի, որն ուղում էր հիրան ախճկան տուր քո տը-
ղին, որ քո խեւ ինամի հնեւ: Ես չեմ դիզում
քո տղեն ընծի կուղա թե չէ, համա ես ընդու
արեին մեռնեմ, էնի որ չհնեւ, ես ու իմ ախպերը
կկորինք էտ դաղան մարթի ձեռով: Հիմի ես իմն
ուսի, թաքաւորն արբած մնա, հիմի դու դինաս,
թե իմ ախպիրը պաի կախեք, համա տուր թո
ինձ էլ խեւը կախարան խառնե, իմ խիղճը հիմի
դինջ ա:

Ձամբախն էն յանեն, հիւանը թալեց խոր

Հատեն ու ասավ.—Թաքավորն արրած մնա, դու սեսար թե Գողգոթն ու Սաթոն իշխան աղնիվ, լավ մարթ են։ Թե դու քո վճիռը շես փոխի Գողգոթի վերաբերյալ, հենա ընձ էլ կախա, թե չէ՝ ես իմ ղիվանը կանեմ, ընձի կթալեմ խանչլիս վրեն։

Թաքավորն հեկավ, գնաց Սաթոյի կուշար, ճակարար պաշեց, ձեռից թոնեց, թերեց նսացրեց հիրան կուշար, հրամայեց Գողգոթի ձեռք-հար հարցկեն, նմանապեսա բերեն հիրան կուշար։ Զամբախին էլ մերթ քաշեց հիրան կուշար։

Ժողովուրթը ուր մէջու խախնդավ, թաքավորը ասավ ջ'ոչ վնդիրին.—Հիմի դու սագ դուղբեղողդ պտի ասես, թե ասիր՝ ես քեզի կախարան չեմ խանի, մինակ դործից կխանեմ ու բերթ կնստըցնեմ, թե դուրը համեն շասիր, քեզի կկախեմ, պահմանի համաձայն, շումքի սութը դու դուս էկար։

Ջ'ոչ վաղիրը, անսավ, ուր թոնվավ, էլ ծպտուն չկանա խանա Գողգոթի ու հիրան քվոր մասին, հիշկաց կախարանին ու լալով ասավ թաքավորին.—Թաքավորն արրած մնա, ես վառութեն արի, դու մի պառճա. ես հեսա համեն մէկ-մէկ քեզի կպաղմեմ, իմալ ուր հեկեր ա։

Ասավ իմալ էկե հիրան կուշար օսպուզկ ուլե՝ գիվա պաի էթա խալոց խոյղ, ընդեղի աաք ջրերում լոխկնա, ուր լավնա, իմալ ա մէ խաա մկան սովրցրե, ուր բանման թերա, ուր, ուր աա-րեր ա Սաթոյի մաղնիքը։—Սաղ էա համեն արեցի, ուր Գողգոթն ու Սաթոյին մեշանդից խանի դուս, ուր հաջողացնի իմ ախճկան աի Զամբախին։ Հիմի դու դինաս, թաքավորն արրած մնա, քո ռախան եմ հնդե, իմալ ուղում ես՝ էնենց էլ արա։

Թաքավորը ջերից խանեց մաղնիքը, հիրան ձեռով դրեց Սաթոյի մաար, էա ժամանակ էլ արթեն Գողգոթին աղաաեր ին, էկավ փաթթվավ Զամբախին ու նսավ կուշար։ Թաքավորն հրամայեց, ուր ջ'ոչ վաղիրին անլեանլը թոնեն, վնդիրա-կան շորերը վրավից խանեն, խաքցենն աուտ-սաղի շոր ու անենն բոնաաուն։ Գողգոթին անդ-նուտեղը, ժողովրթի հառեչ, նշանակեց ջ'ոչ վն-գիր։ Կարքաղենց թաղարուք անան Զամբախի ու Սաթոյի խարնսի խամար։

Խարնսի պաղրասաութենը ուր անսան, օխար օր, օխար գիշեր, օխար ձեռք նաղարով-դուռնով, օխար ձեռք խանանդեքով խարնիս արին, քեֆ արին, սաղ քաղկի ժողովրթին լիացրին։

Թաքավորն էլ հիրան հոժար կամքով հիրան թախաից հիշավ, աղին՝ Զամբախին նսացրեց հի-րեն սեզը։ Ըսու խամար էլ ջ'ոչ քեֆ արին պրո-ծան, ուր հեկան ամեն մարթ գնաց հիրան գոր-

ծին, դուք էլ դացեք ձեր պործին, խեքյաթը պրո-ծավ։

Ասուց իրեք խնձոր հնգավ, մեկը ասողին, մե-կը լսողին, մեկն էլ քյասիբ քյուսպին հնի։

4. ԱՆԽԻՂՃ ԹԱՔԱՎՈՐԻ, ԽԵՆՈՔ ՎԱՐԹԱՆԻ ՈՒ ՀԻՐԱ ԽՈՐ ԽԵՔՅԱԹԸ

Հնում ա շնում մե խաա շատ սաոփ, եոսնա շար ու անխիղճ թաքավոր ա հնում։ Էա թաք-ավորին էլ հնում ա մե խաա շաա խոբոա ախճիկ. էլ զագ-ղավադա շհնում։

Թաքավորը էնքան եոսնո ու շաո ա հնում, ուր ոչ մե մարթ շի հիշխնում էթա կուշար, մե թան ասա, շումքի յա գլոխը կդրել ա աալում, յա էլ աանում կոխում ա թեթը. ուղում ա մեղա-վոր հնի, ուղում ա արթար, ուր դացեր ես թաք-ավորի կուշար, հանքեթ մեղավոր ես։ Ըսու խա-մար էլ ոչ մե մարթ հախու շէր էթում թաքավորի կուշար։

Համա դե շէթալ էլ շհնում. խաղար գործ ա ւպաաալում, դե ժողովուրթ ա, ցավ ունի, դարդ ունի, ուր պտի թաքավորը հիմանա և վճոա, հա-մա ի'նչ անեն, ուր ա հիրա դլխից ձեռ վերցրե, ուր էթա թաքավորի կուշար հիրա ցավն ու դարդ պաղմա, յա էլ շէ՝ ժողովրթի մասին խոսա։

Հավաքվեցին, հիրանք հիրանց միաք արին, միաք, վերըր ոբոշին, ուր թաքավորի կուշար էթան ծեր, խալիվոր մարթիք, թե կսրպանա, ջահնամ, խալիվորի կրսպանա. համ էլ ոբոշին, ուր դան ուր էթալու հնեն թաքավորի կուշար, մե մարթ շէ-թա, մե քանի խալիվոր հնեն էթան, խո հմնին շրդանա սրպանա։

Էանեց ոբոշին, էանեց էլ արին։

Հառչի դրուն հեկան մե ութ-տաս խալիվոր-ներ, դացին թաքավորի կուշար, ուր հիրանց խոն-թիրքն ասեն, ցավ ու դարդերը պաղմեն։ Մերերն ին, հեկան հիրանց անեցիքի խեա թարով մնա արին, լացով, սքով, շիվանով, կանչին հիրանց ասավածն ու դացին դրա թաքավորի պալաար։

Պալաաի թողոր սաղ շափոնուկ էր, էլ խն-դար ու մե կ'արանվնջներով, սարաժնիկներով, սուլան-կ'ափլան շներով, օձն հիրա պորաով, կ'ուշն հիրա կ'անագով շէր կանա մանի թաք-ավորական պալաար։ Մերերը ուր էկան սարաժնիկ-ների ջ'ոչին ասին, ուր մեղի ճամփել ա մեր ժո-ղովուրթը, ուր մեր ողորմած թաքավորին պաղ-մենք մեր ցավն ու դարդը, էն էլ մե ճար անա, կարքաղնա, սարաժնիկների ջ'ոչը դնաց թաքավորի կուշար, ասավ.—Մե քանի ծեր մարթ էկեր են, ուղում են դան քո կուշար, թողնենք, թե՝ ի'նչ ա-նենք։

Թաքավորը հր էտի շտավ, մթնդեց, մթոնց, մեկ ուղեց ասեր՝ սաղին էլ ջարդեք, մեկել ասավ. — Լավ, թո զան, տեհամ՝ ի՞նչ են ուզում:

Խտլիվորներին տարան ներս, ըստինք էլ ասով-դիզով դացին ստրաժնիկների հեղեից: Տարան էն օթաղը, հրդեղ թտքավորը պտի գա: Խտլիվորները սաղ շոքան ու էտենց մացին շուր թաքավորը հիւրա նազիր-վանդիրով, վանդիր-վանդիրով մտավ էտ օթաղը: Ծերերը սաղ հերսները քսին փետին, չին հիշխնում գլխները լանցրցնել, շուր թաքավորն ասավ. — Հ՞նչ եք էկե ե ի՞նչ էք ուզում:

Ծերերի լիդուն մե վախտ կպավ, բան չին կտնում խոսա, վերջը, որ թաքավորը եոսոտավ, հար զանեց գետնին ու ասավ. — Որ էկել եք, գր ասեք՝ հնչ ե՞ք էկե:

Ըտու վրեն նոր ծերերից ամենածերը ասավ. — Թաքավորն արրած կենա, ժողովուրթը խնդար ու մի ցավ ունի, համա չեն հիշխնում գան քո կուշտը, խնթրվում ենք, որ հրաման տաս, դտն քո կուշտը, հիւրանց ցավ ու դարդը պաղմեն:

Թաքավորը ըտու վրեն մթնդեց, մթոնց, ոտները վանեց գետին ու բոռաց. — Տո շուն շան որդիք, ես փիս թաքավոր եմ. կ'անընթացեմ, տիեք ըտոնցը, ճամփու դրեք. — հետո էլ դարցավ ծերերին հեղցեց, — եփ ուզում եք, հարեք-դնացեք: էտ էլ ասավ, գիւա սրտներն առնի:

Խտլիվորներին քոթակելով, ջտրթելով պալատից խանին խորին: Ըստինք էլ քոռ ու փոշման թողին էկան, ժողովուրդին մեկ-մեկ պաղմին հիւրանց գլխի էկածը:

Հնցավ մե խելակ ժամանակ: Ժողովուրթը թնդա դրուն հիւրանց միջ ծեր մարթիք հնդրին, էլի ճամփին թաքավորի կուշտը: Համա էս դրուն թաքավորը ծերերին ըսկի էլ շթոդեց հիւրա ապալանքները մղեն, ասավ. — Ձանեք ջարդեք, որ ըստուց գենը էլ չհիշխնան դտն:

Սաղ էտ էկած խտլիվորներին սրպանին, մե մարթ փախսով, ժողովրթին պտղմեց, թե ինչ օլին էկավ հիւրանց դուխը: Ըտուց ստվալի թաքավորը հրաման տվեց, որ հիւրան տիրութենի մեղ, մարթը որ հեղավ օխտանտուն տարեկտն, ընդուն գնդահարեն, թե չէ՝ հա գրան դալտ կտտեն:

էտ հրամանն չնելուց դեն որդե որ ծեր, ըխտիլար մարթ ին տենում, առանց մե խոսկ ասելու, յաստուները, յտ էլ չէ ստրաժնիկները գնդահարում ին:

Մարթիք ըսկսին փախնել դես ու դեն. համա թաքավորի ձեռից դուր փախնեն, որ պրծնեն, էտենցութենով սաղ ծերերին կոտորին, էլ ծեր մարթ չմնաց:

Թաքավորի քաղկում մե խատ պառավ, խելոք, հիմաստուն րիճա մարթ կար: էտի կհինը օխտ

տանասուն տարեկան: Ըտուն էլ կար մե խատ սիրուն, ջայել տղա, անունը Վարթան, որը հիւրան խորը շատ էր սիրում, խերն էլ տղին էս հաշկից էն հաշկը չէր փոխում: էտ կ'փրտոցը որ հնգավ, տղեն խորն ասավ. — Այ խեր, հարի քեղի պախեմ, էտ մարթակեր ստրաժնիկների ձեռը չհնգնես, թե չէ՝ քեղ էլ կղանեն:

Խերն ասավ. — Այ Վարթան ջան, էս քաղկում ընձի չես կանա պախի, կհիմնան, քեղ էլ իմ խետ կփաշցնեն: Հարի էս քաղկից էթանք, մեղու դտոնանք, ընդե մեղի մե տուն շինենք, մալ, օխճար առնենք, արրենք, շուր տենանք՝ իմալ ա հինում:

Մե գիշեր դողտուկ հինում, էտ քաղկից փախնում են քաղկի բողորի դեղրանքից մեկը. ասենք իմալ Բյալանա էթաս նալնդուղ: Խեր ու տղտ ըտե հիւրանց խամար թնդա տուն ու տեղ են դրնում, խերն էլ պախկվորում տ, որ էս ու էն շտեհան ու էտենց արրում են:

Հիմի խարարը տտնք թաքավորից: Թաքավորը եփ սաղ խտլիվորներին սրպանել ա տտում, երգրի դրութենը դրհա յա վատրնում, էտ բոլ չէր թաքավորի մինուճար ախճիկն էլ խիվնդում, հնգնում ա ջլերը: Երգրում էլ հիմաստուն, էլ հեքիմ, էլ դարվեղ շրմնում, որ չգտն ախճկան տենտն, որ բալքի մե գեղ ու ճար տենն, համա բան դուա շրդալում ա, սաղ էլ թողում քոռ ու փոշման էթում են, շումքի թաքավորը խոստացել տ, որը որ հիւրա ախճկան սաղծնա՝ էնի շատ ջ'ոչ պարդե կտտնա: էտ հեքիմներն ու դարվեղներն էլ տենում ին, որ բան դուա շրդալում, թողում շուտ փախնում ին, վտխենում ին, որ թաքավորը հիւրանցը կսրպանա:

Մե օր թաքավորի կ'անընթացեմ ձիտնք բերում են էտ հիմաստուն ըխտիլտրի դեղը ջ'րեղու: Մեկ էլ տենում են, որ ձիտնքը խուշ-խուշ են հինում, համա ջ'ուր չեն խմում: Կ'անընթացեմ հիշկում են դես, հիշկում են դեն՝ բոն չկա, գարմանում են, թե էս ի՞նչ բան ա, որ ձիտնքը ջ'րին մոտ չեն էթում: Նոր ըտե կ'անընթացեմ մեկը գեթղանդեթ, թնդալի տենում ա, որ ջ'րի մեղ մե բան ա փելքստում, ըտու խտմար էլ ձիտնքը հուշտ են հինում, ջրին չեն մոտկնում: Լիդվոր են մտցնում ջուրը, որ էտ բտնը խտնա, համա լիդվորը մե սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլաս շուր արեւտոց ման ա դալում ջ'րի տակ, համա էտ փելքստուն բտնը չկանում գթնի: Արեր որ մղնում ա, նոր ձիտնքը մոտկնում են ջ'րին ջ'ուր են խմում: Ձիտնքը խեծում, էթում են ու հիւրանց աեսածը պաղմում նազիր-վանդիրին, էն էլ էթում թաքավորին ա ասում: Թաքավորն էլ նազիր-վանդիրին կարքաղում ա. — Հեքուց դու էլ կեթաս խետները, կտենտս էտ ինչ բտն ա, համ էլ ջ'րի տկից կխանես, կրերես:

Դու մի տես, էս ձիանքը ջրեղու վախտը, էն խալիվորի տղա Վարթանը ըտեն ա հլնում ու էտ հմեն հիրան հաշկով տենում ա: Զարմացած գալում ա տունը ու հմեն ինչ խորն ասում ա: Խերը էտ ուր լսում ա, տղին ասում ա.—Այ դեթի, էտի շար հաշկ, շար փուշ ա, որը ոնչ թե ջրի մօշ ա, էնի ջրի կ'րողին, մե խատ բանցը բնուդու ծառ կա, էտ շար հաշկ, շար փուշը մե կ'առկ'առ ա բերե, ըտու շաղավիքն ա, որ հնգնում ա ջրի մեջ: Գնա ընդե, որ գրան, ասա՝ ես դիդում եմ էտ ինչ ա, ուզում եմ հերուց ևս բերեմ թաքավորի պալատը ե ասեմ՝ ինչ բան ա: Դու կտանես ուլալատ, դուրը թաքավորի կուշտը, կտուես. թաքավորն արրած կենա, էսի քո ախճկա դեղն ա, համա դու խոստանաս խաղաղութեն, մեկ էլ ժողովրթին խաց, էլ բան չէ: Թաքավորը էտի որ խոստանա, ասա՝ դը հիմի ընձի տարեք քո ուխճը կուշտը: Թաքավորը, նաղիր-վաղիրը, վաղիր-վաղիրը քօզի կտանեն ախճկա կուշտը: Իմալ կմդենա ախճկա օթաղը, անբեալը կխանես հաշկը, կքցես ախճկա ոտներին տակը ու կասես. «Չար հաշկ, շար փուշ խալի խափանի, էս տխճը կան սաղ ջան տու, ցավից չոռից աղատա՛ս: էտի որ կասես, յետո էտ ախճկան գոշտա, թո հիրա ձտխ ոտով տորբա էտ շար հաշկը, էտենց որ անես ախճիկը անբեալը կլավնա կհլնի մորե մեկ:

էն մեկել օրը Վարթանը լուսըմթախառ հըլնում, էթում ա բաւդու ծառի տակ, հիշկում ջրին, տենում ա էն պսպղուն բանը էլի փեփրելում ա: Հինքը քաշվում ա մե տալդա տեղ ու սպասում:

Մե խելի դախ հսնում ա, մեկ էլ տենում ա թաքավորի ձիանքը բերին: Ըտոնց խեռ էկեր ա թաքավորի նաղիր-վաղիրը: Զիանքը քաշում են ջրը, համա ձիանքը էլի խուշ-խուշ են հլնում, ջրին շեն մոտկնում: Նաղիր-վաղիրը եռստում ա, էլի լողվոր են մոտցնում ջրը, համա լողվորը շար կեսօր շարչրվում ա, բան չկտնում անա: Տղեն էտ ուր տենում ա, հիրա պախկվորուկ տեղից դուս ա դալում, էթում նաղիր-վաղիրի կուշտը, ասում ա.—Ես էտի կանամ խանեմ, համա պտի մարթ չհլնի էստե, դուք գացեք, հերուց հառավոր ես կբերեմ թաքավորի կուշտը:

Նաղիր-վաղիրը ստիբում ա, ուր տղեն հիմի խանա, համա Վարթանն ասում ա.—Չընի, ես խոստտնում եմ հերուց հառավոր բերեմ, թե չբերեմ՝ իմ գլխը կդրեք:

Նաղիր-վաղիրը փորը-փոշման թողում, էթում ա. ընդու հեղեից էլ ձիանքն են քաշում, տտնում: Նաղիր-վաղիրը ուլում ա: Թաքավորի կուշտը, մեկ-մեկ ուլում ա հիրան հմեն տեսածը: էտ տղեն էլ էթում ա, խորն ս: ուլում: Խերն ա-

սում ա.—Հառավոր: էն դլխեն, նախորներից հառեւ, տըլորների հառչի կանչին, կհլնես կեթաս ու կբանցրնաս էն բառդու ծառը, մե խատ սուր հովշարի, մե խատ էլ աբրշումն լայլուխ կտանես խետու: Որ կհլնես ծառը՝ կ'առկ'առ ծառի վրեն կհլնի, ձեռաց հովշարին կթալիս կ'առկ'առ վիզը կկդրես, ջանդակը կխորես էտ ծառի տակը, թաղադուն կհլնես ծառը, ուսուլով տըրշումից լայլուխը կթալես շար հաշկ, շար փուշ վրեն, կփաթտես ու կդնես ձախ ջերտ, կհիշենս ցած ու կվազենս ուլալատը: Որ կխաանես ընդե, տստ՝ թո քե տանեն թաքավորի կուշտը:

Հառավոր էն գլխեն Վարթանը վերցում ա հովշարին, մե խատ էլ տըրշումն լայլուխ, էթում ա դրբա ծառը, հիշկում էս յան, հիշկում էն յան, տենում ա, որ մարթ ու մուրթ չկա, հլնում ա ծառը, խտսնում ա կ'առկ'առ բնին, տենում ա կտուկառ բնում քնուկ ա: Զետուց հովշարին թալում, կ'առկ'առ վիզը կդրում ա, կ'առկ'առ թիրտալով հնգնում ա ցած, տղեն վոտղով ծառից հիշնում ա, ծառի տակը մե փոս փորում, կ'առկ'առ ջանդակը խորում ա ըտե, նոր հինքը էլի հլնում ա ծառը, խասնում ա բնին, աբրշումն լայլուխը խտնում, քցում էտ շար հաշկ շար փուշի վրա, փաթտում, դնում ձախ ջերտ, ծառից հիշնում ա ցած ու, թաքավորի պալատ, դո՞ր ես, էկտ, տստում ա ու վտղնում: Խասնում ա պալատ թե չէ՝ կ'արան-վաշներին ասում ա.—Շուտ ընձի խասցրեք թաքավորի կուշտը, ես էն պսպղան բանը բերեմ եմ:

Կ'արավաշները դիմում ին, որ էտ տղեն պտի գա, անբեալը ապարանքների դռները բացում են, Վարթանին տանում են նաղիր-վաղիրի կուշտը:

